# 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ 2017 թվականի հունիսի 7-ին գումարված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգային հարցերի քննարկման տևողությունը սահմանել՝

1) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին»,

«Ազդարարման համակարգի մասին»,

«Օպերատիվ - հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»,

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»,

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»,

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»,

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,

«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»,

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»,

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»,

«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի առաջին ընթերցմամբ քննարկման համար՝ 4 ժամ՝ հետևյալ տարբերությամբ՝ հարցեր տալու, պատասխանների և արձագանքների ընթացակարգը կազմակերպել «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածով սահմանված կարգով.

2) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի առաջին ընթերցմամբ քննարկման համար՝ 60 րոպե.

3) «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի առաջին ընթերցմամբ քննարկման համար՝ 3 ժամ 30 րոպե.

4) «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին».

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի առաջին ընթերցմամբ քննարկման համար՝ 3 ժամ 30 րոպե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆ

7 հունիսի 2017 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 011 - Լ